ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/32, 18.03.2022թ.

Շտկման ամսաթիվ՝ 22.03.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Սենտրալ» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14»

Գնման առարկան՝ ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրերով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել 10.03.2022թ. թիվ 3 արձանագրությամբ ընդունված որոշումը,
2. դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը,
3. կրկին ծանուցել «Սենտրալ» ՍՊԸ-ին շտկելու վերաբերյալ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ֆ. ՄԱՆԳՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մելիք Ադամյան 1,
ՀՀ ֆինանսների նախարարություն

Բողոք բերող՝ «Սենտրալ» ՍՊԸ
Հասցե (գտնվելու վայր)՝ ՀՀ, ք. Երևան, Եղվարդի 108
էլ.փոստ՝ central.llc@yandex.com
Հեռ: +(374) 96 66 96 05

Պատվիրատու՝ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ավտոմեքենաների պահեստամասերին ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ

ԲՈՂՈՔ

- ***Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը***

✓ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ավտոմեքենաների պահեստամասերին ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սենտրալ» ՍՊԸ-ն:

✓ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության /կցվում է/ համաձայն՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում միաժամանակ լրացված է և 4.5 և 4.6 բաժինները, մինչդեռ պետք է լրացվի կամ 4.5 կամ 4.6 բաժինը: Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 4.5 /և 4.6/ բաժնում մասնակցության չափը նշել եք 100%, մասնակցությունը նշված է ուղղակի, մինչդեռ «ա» կետի փոխարեն նշված է «բ» կետը, որը լրացվում է, եթե անձն «ա» կետի իմաստով չի հանդիսանում կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է Կազմակերպությունը՝ իրավական գործիքների /այդ թվում՝ կնքված գործարքների/ ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով: Այս մասով ևս հարկավոր

է կատարել հստակեցումներ: Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 4.7.1 բաժնով պահանջվող տեղեկատվությունը ներկայացված չէ:

✓ Նույն արձանագրության 5-րդ մասի համաձայն՝

○ մասնակիցներին տրվել է մեկ /1/ աշխատանքային օր անհամապատասխանությունների շտկման համար: «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից չի կատարվել անհամապատասխանությունների շտկում:

○ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկման ենթակա Հավելված 1.2-ը ստորագրված չէ հայտարարագիրը՝ ներկայացնող անձի կողմից և հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

✓ Արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

- ***<u>Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.</u>***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) **գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային**, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով **մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:**

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, **ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:**

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, **պահանջների**, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու **հիմնավորվածության** համար:

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ավտոմեքենաների պահեստամասերին ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սենտրալ» ՍՊԸ-ն:

Ինչպես արդեն հայտնել ենք, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության /կցվում է/ համաձայն՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում միաժամանակ լրացված է և 4.5 և 4.6 բաժինները, մինչդեռ պետք է լրացվի կամ 4.5 կամ 4.6 բաժինը: Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 4.5 /և 4.6/ բաժնում մասնակցության չափը նշել եք 100%, մասնակցությունը նշված է ուղղակի, մինչդեռ «ա» կետի փոխարեն նշված է «բ» կետը, որը լրացվում է, եթե անձն «ա» կետի իմաստով չի հանդիսանում կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է Կազմակերպությունը՝ իրավական գործիքների /այդ թվում՝ կնքված գործարքների/ ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով: Այս մասով ևս հարկավոր է կատարել հստակեցումներ: Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 4.7.1 բաժնով պահանջվող տեղեկատվությունը ներկայացված չէ:

Այնուհետև, նույն արձանագրության 5-րդ մասի համաձայն՝

- մասնակիցներին տրվել է մեկ /1/ աշխատանքային օր անհամապատասխանությունների շտկման համար: «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից չի կատարվել անհամապատասխանությունների շտկում:
- «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկման ենթակա Հավելված 1.2-ը ստորագրված չէ հայտարարագիրը՝ ներկայացնող անձի կողմից և հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Արդյունքում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, որով խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Խ Ն Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. **Պարտավորեցնել «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 10.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ ընդունած որոշումները:**
2. **Պարտավորեցնել « ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումները:**
3. **Պարտավորեցնել «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին կրկին ծանուցել «Սենտրալ» ՍՊԸ-ին շտկելու վերաբերյալ /մանրամասն նկարագրելով, թե ինչը պետք է շտկվի/:**

Կից ներկայացվում՝

1. Պետական տուրքի վճարման անդորրագիրը:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության պատճենները:

Առդիր՝ թերթ:

Հարգանքով՝

«Սենտրալ» ՍՊԸ-ի տնօրեն՝ ______________ Ա. Զաքարյան

_17__ ._03_ . 2022թ.